

ԲԱՆՆՍԻՐԱԿԱՆ

ԳԻՆԳԱՄԷՇԻ ԴԻԻՑԱԶՆԵՐԳՈՒԹԻՒՆԸ

Ս. Արտոյս երեսասարդ եւ ուսումնասնել Միաբաններէն Հագո. Տ. Անուսան Վրդ. Ջոջանեան 1953-55 թուականներուն **Սիսի** մէջ հրատարակած եր հնագիտական-բանասիրական տեսակէտ յոյժ անհեկան **Պիլգամէշի Պիլգամէշի** գրքի կէտը: Այնուհետեւ, Հագո. Հայր ուսանելու համար Փարիզ մեկնած ըլլալով, յօդուածը ընդհատեցաւ: Երեւ արիներ առաջ իր վերադարձէն ապին, Հագո. Հայրը գրադած էր աւիւ կարեւոր աշխատութեամբ մը — Հր. Անուսանի **Վիպակասարի** ներածական Հասարի Բնական եւ վերլուծական ուսումնասիրութեամբ, որ 1959-11 **Սիսի** մէջ հրատարակուել գրաւ յոյս տեսաւ նաեւ առանձին հասարգով: Ամադգրիս այս թիւով Հագո. Հայրուրը կը սկսի իր ընդհատած յօդուածի տարւնակութեան, որ նոյնպէս յոյս պիտի տեսնէ առանձին հասարգով:

ԽՈՐԸ.

(Մեծ լրատմ մը կայ: Երբ բնագիրը նորէն կը սկսի, Էնկիդու — շարունակելով իր դառն գիտողութիւնները — կ'աղբրէ Շամաշին անէծքը որսորդին վրայ):

1. — «[...] Իր հարստութիւնը փճացուր, նուազեցուր իր ոյժը.
2. — Իր [ոյ]դին [անընդունելի ըլլայ] քու առաջ.
3. — Թող [անասունները, զորս կը ջանայ թակարդել] խուսափին իրմէ.
4. — [...] Թող՝ որսորդը [չհաս]նի իր որսի փափաքին:
5. — [Իր սիրտը] խախտուեց իրեն անիծելու [աղի]ճը, պերճաղիճը.
6. — «[Ե]կ, ո՞վ աղիճ, քու ճա[կատա]-գիրը պիտի սահմանեմ,
7. — [ճակա]տագիր մը որ պիտի չվերջանայ ցաւիտեան.
8. — [պիտի] անիծեմ քեզ բուռն անէծքով մը.
9. — [ու ...] Թող իր անէծքները իրաւանան շուտով քու առաջ.
- 10-18. — (չափազանց կցկոտուր՝ Թարգմանուելու համար).
19. — [...] փողոցը պիտի ըլլայ քու բնակավայրը,

20. — [պատին շուքը պիտի ըլլայ] քու կայանը,
21. — [...] քու ոտքերը.
22. — [Թող արբաւը եւ ծարաւին դարիկին] քու այտերուն.
- 23-32. — (կցկոտուր՝ Թարգմանուելու համար).
33. — Երբ Շամաշ լսեց [խօսք]երը իր բերին,
34. — Ըն անմիջապէս կանչեց զինքը երկրի(էն):
35. — «Ինչո՞ւ, ով Էնկիդու, կ'անիծես աղիճը, պերճաղիճը.
36. — ո՞վ ուսուցանեց քեզի աստուածավայել ճաշ ուտել,
37. — արքայավայել զինի ըմպել,
38. — ո՞վ զգեստաւորեց քեզ շքեղազարդ զգեստով մը,
39. — ո՞վ տուաւ քեզի երեկելի Գիլգամէշը իբրեւ քու ընկերը.
40. — Ե հիմա, ով Գիլգամէշ բարեկամս, քու մտերիմ բարեկամը.
41. — [Թող] քեզ հանգչեցնէ հոյակապ բազմոցի մը վրայ,
42. — քեզի հանգչեցնել տուաւ պատուոյ բազմոցի մը [վրայ].
43. — քեզի նստեց[նել] կու տայ հանգըտաւէտ աթոռի մը վրայ, (Իր) ձախակողմեան աթոռը,
44. — [որպէսզի] երկրի [իշխան]ները համբուրեն քու ոտքերը:
45. — Գու վրայ Ուրուկի Ժողովուրդը [լա]ւ (ե) ողբաւ [պիտի տայ].
46. — [ուսնացող] Ժողովուրդը վիշտով պիտի լեցնէ քու վրայ.
47. — [Ե ինք], [քու թաղուել]էզ վերջ, [իր] մարմինն երկար հեր կրել պիտի տայ.
48. — [պիտի զգեստաւորուի] առիծի մորթով եւ պիտի թափառի ա[նպատ]իւ վրայ:
49. — [Երբ] Էնկիդու [լսեց] արիասիրտ Շամաշի խօսքերը,
50. — [...] իր զայրացած սիրտը հանդարտեցաւ:

Շուրջ երկու տող կը պակսի. Էնկիդու կը մեղմանայ եւ անէծքը կը վերածէ օրհնութեան մը:

ՍԻՒՆԱԿ ԶՈՐՐՈՐԴ

1. —
2. — «[Լիրքաներ, իշխան]ներ և ազնու-
կաններ պիտի սիրեն [քեզ]».
3. — [...] պիտի զ]արնէ իր զինտին».
4. — [...] պիտի] ցնցէ իր զխուռն մաշք».
5. — [...] . . . պիտի թուլցնէ իր գօտին
քեզի համար».
6. — [...] սեակուն(?) լրջաբար և ոսկի».
7. — [...] հոտ տրու[ի] անոր, որ քեզ
անպատուեց,
8. — [քեզի համար . . .] . . . իր լիցուած
շահմարանները
9. — [քուրմը] պիտի առաջնորդէ քեզի
աստուածներու [տառջ]».
10. — [քու պատճառաւ] կինը՝ եօթերու
մայրը, պիտի լքուի».
11. — [...] էնկի[դու, որուն մարմինը հի-
ւանդ է,
12. — [...] առանձին կը քննայ».
13. — [...] գիշերուայ ընթացքին [կը
պարպէ] իր սիրտը իր բարեկամին».
14. — «[Բարեկամա], երազ մը տեսայ այս
գիշեր,
15. — երկինքները [կը գոռային], երկիրը
կ'արձագանգէր».
16. — [...] կը կենայի [տա]նձին».
17. — [...] , մթին էր իր գէմքը».
18. — իր գէմքը նման էր
19. — [...] իր մագիլները (նման) էին
արծիւինին».
20. — [...] զիս յաղթահարեց(?)».
21. — [...] . . . կը ցառկէ».
22. — [...] զիս ընկզմեց».

(Կտորուածք)


31. — [...] . . . զիս աչակերպեց».
32. — իմ թեհքս, թռչունի մը հանգոյն,
33. — նայելով ինծի, կ'առաջնորդէ զիս
խաւարի սենեակը՝ Իրկալայի բնա-
կարանը,
34. — այն սուռը՝ ուրկէ ով որ կը մտնէ
երբեք գուրս չ'իլլեր».
35. — ճամբան՝ որու ուղին հոտ չի վերա-
դարձներ».
36. — այն սուռը՝ որուն քանկիները զուրկ
են լոյսէ».
37. — ուր հողը իրենց անունդն է և ցիխը
իւրինց ուտեստը».

38. — զգեստաւորուած են թռչուններու
պէս, թեաւոր հանգերձներով».
39. — լոյս չեն տեսներ և խաւարի մէջ կը
բնակին».
40. — [հո]ղի [տան] մէջ, ուր մտայ,
41. — նա[խացայ իշխաններուն], և (հա-
ւասիկ?) թագերը վար գրուած են».
42. — [...] անոնք որոնք (սովոր էին
կրել) թագեր, որոնք հին օրերէ ի
վեր իշխած էին երկրին,
43. — [ներկայացուցիչները(?) Անուի և
էնիլի, անոնք էին որ կը սպասար-
կէին խորոված միսը,
44. — որոնք կը սպասարկէին [հիմուած
ապրանքները], որուն պառ ջուր կը
սպասարկէին մաշկերէն,
45. — փռչի տան մէջ, ուր մտայ,
46. — կը բնակին աւագ քուրմեր և ջահըն-
կաներ,
47. — հոն կը բնակին թովչութեան և հիա-
ցական քուրմեր,
48. — հոն կը բնակին մեծ աստուածներու
կոնքերու օժոգները,
49. — հոն կը բնակի էթանան, հոն կը
բնակի Սուսուկանը,
50. — [հոն կը բնակի նաև] էրէշկիզալը՝
ստորերկրեայ աշխարհի թագուհին,
51. — [Իէլիթ-]—Յիրին՝ ստորերկրեայ աշ-
խարհի գալիքը, կը ձնադարէ անոր
առաջ,
52. — [տախտակ (մը) բռնած է] և կը
կարգայ անոր առաջ,
53. — [բարձրացնելով] իր զուլսը նայն-
ցաւ ինծի,
54. — [...] և տարաւ այս [մարդը]».

Հոս կայ շուրջ 55 տողնոց բաց մը։ Հե-
տեակը բնիկը Գիւլամէշի կողմէ կատար-
ուած ճառ մը կը պարունակէ, հաւանաբար
իր մօր կողմէ ուղղուած։

5. — «Բարեկամ[ս] երազ մը տեսաւ չա-
րազոյժ [բովանդակութեամբ . . .],
6. — Այն օրը որ տեսաւ երազը վերջա-
ցած էր [...]».
7. — էնկիպուն գարնուած երկարած էր,
օր մը [...]».
8. — զոր էնկիպուն իր բազմոցին վրայ
[. . .]».

և չորրորդ օր մը [. . .],



10. — հինգերորդ, վեցերորդ, եօթներորդ, ութերորդ, իններորդ [և տասներորդ օրը] .
11. — էնկիդուի հիւանդութիւնը [աւելի և աւելի ևս վատթարացաւ] .
12. — տասներմէկերորդ և տասներկուերորդ օր մը [...] .
13. — էնկիդուի [իր] անկողինին վրայ [հրկարած է ...] .
14. — կանչեց Գիլգամէշը [...] .
15. — ճարեկամ[ս], [...] գիտ անիծեց .
16. — [պիտի չմեռնիմ] անոր հանգոյն որ [կ'իյնայ] մարտի մէջ .
17. — Բարեկամս, ով որ [կ'իյնայ] մար[տ]ի մէջ [օրհնեալ էջ] .
18. — (բայց) ես, [ես պիտի մեռնիմ նախատեսքի մէջ(?)].
(կոտորածք)

Տ Ա Ն Տ Ա Ն Ե Ռ Ե Ր Ո Ր Դ

Ս Ի Ի Ն Ա Վ Ա Ռ Ա Ջ Ի Ն

1. — [Անմիջապէս որ] [առաւօտ]եան առաջին փալիւրիլը [ճառագայթեց],
2. — Գիլգամէշ բացաւ իր բերանը և ըսաւ [իր բարեկամին] .
3. — Ով էն [կիզու, ...] վիթի մը [պէտ?],
4. — և զօռն էիր [երբ ...] .
5. — զօռն էիր զոր [...] կրթեց .
6. — և [...] արօտը ,
7. — Լեռ[նե]ր կը բարձրանայինք(?) և կ'իջնէինք(?) մայրիներու անտառը .

Յաջորդական տասնընթիւ տողերու մէջ, չափաւանց կցկտուր՝ թարգմանութեան համար, Գիլգամէշ յայտնապէս կը շարունակէ թուարկումը արի արարքներու, զորս երկու հերոսները կատարած են միասնաբար։ Ապա, բնագիրը կը կենայ, Գիլգամէշ միւրճուած է վշտի մէջ իր բարեկամի մահուան առթիւ և կ'ուղղէ իր խօսքը քաղաքի երէցներուն՝ հետեւեալ վշտագին արտայայտութիւններով։ —

Ս Ի Ի Ն Ա Վ Ե Ր Կ Ր Ո Ր Դ

1. — Ունկնդրեցէք ինձի, ո՛վ երէցներ, [և ակնջ տուէք] ինձի .
2. — Էնկիդու[ն], իմ [բարեկամ]ին համար է որ կ'արտասուեմ ,

3. — պոռալով զօռնօրէն ողբացող կնոջ մը պէս ,
4. — տապաւրը կողքիս, [աղե]ղը ձեռքիս ,
5. — զաշոյնը գօտիիս, [վահանը] որ իմ առջևն էր ,
6. — իմ տօնական տարազը, իմ ուրախութիւնս .
7. — չար [ոգի] մը ելաւ և [գողցաւ(?) ինձմէ] .
8. — [իմ բարեկամս], իմ [կրտսեր եղ]-բայրը(?), որ որսաց արձակադաշտի վայրի էշը (և) յովազը տափաստանի .
9. — է[նկիդու]ն, իմ բարեկամը, իմ կրտսեր եղբայրը(?), որ որսաց վայրի էշը արձակադաշտի (և) յովազը տափաստանի ,
10. — Մհնք որ [յաղթեցինք] բոլոր խոչընդոտները, որ բարձրացանք [լեռնե]րը ,
11. — որ բռնեցինք և [սպաննեցինք] երկընքի ցուլը ,
12. — որ տապաւեց Գուբաբան, որ [կը քնայէր] [մայրիներու] անտառին մէջ ,
13. — Արդ, ի՞նչ տեսակ քուռն է որ [քեզ] նուաճած է ,
14. — նսեմացած ես և չես կրնար [զիս] մտիկ ընել .
15. — բայց չի բարձրացներ [իր աչքերը] ,
16. — զպտու իր սրտին, բայց ան չէր բախտիր ,
17. — ապա քօզարկեց (իր) բարեկամը հարսի մը պէս [...] ,
18. — բարձրացուց [իր ձայնը] առիւծի մը հանգոյն ,
19. — էգ առիւծի մը պէս, զրկուած [իր] կրկուններէն ,
20. — ետ և առաջ գնաց [իր բարեկամ]ին առջև ,
21. — քաշելով (իր մազը) և սիւսկով (զայն) [...] ,
22. — հանելով և նստելով (իր) գեղեցիկ (հանդերձք)
23. — [անմիջապէս որ] [առաւօտ]եան առաջին փալիւրիլը ճառագայթեց, Գիլգամէշ ...] .

(կոտորածք)

ՍԻՒՆԱԿ ԵՐԵՐՈՐԴ

1. — [պատուով] բազմոցի մը վրայ քեզի տարածուիլ [տուիլ] .
2. — քեզի նստեցնել տուի [հանգստաւետ աթոռի մը վրայ, իմ ձախսկողմեան գահիս],
3. — որպէսզի երկրի իշխանները [համբուրին քու ոտքերը] .
4. — քու վրայ [Ուրուկի] ժողովուրդը լալ պիտի տամ [և ողբալ] .
5. — ուռնացող ժողովուրդը [ծառայութեամբ պիտի բռնաւորեմ քեզի համար] .
6. — և քու թագուհիէն վերջ, ինքզինքիս [կրել պիտի տամ երկայն հեր] .
7. — ա[ռիւծի] մորթ պիտի հագուիմ և պիտի թափառիմ անապատին մէջ] : և
8. — Անմիջապէս որ առաւօտեան առաջին փալիւլը ճա[նապալիկեց, Գիւգամէջ ...]
9. — թուլցուց իր գօտին [..] .

Այստեղէն մինչև Հինգերորդ Սիւնակ, տող 42, հազիւ թէ կտոր մը պատուած է. պակասող մասը կը վերաբերի էնկիզուի թաղման :

ՍԻՒՆԱԿ ՀԻՆԳԵՐՈՐԴ

42. — [...] Անուհա[կներու ...] գատաւորը,
43. — երբ [Գիւգա]մէջ լսեց ասիկա,
44. — յղացաւ [իւր սրտին մէջ] գետի մը(?) պատկերը(?) :
45. — Անմիջապէս որ առաւօտեան առաջին փալիւլը ճառապալիկեց, Գիւգամէջ շինեց [...]
46. — դուրս բերաւ ելամմազու փայտէ մեծ սեղան մը,
47. — մեզի լեցուց սարդիտէն(?) բաժակի մը մէջ,
48. — կարագ լեցուց լըջաքարէ բաժակի մը մէջ,
49. — [...] զարգարեց և ցուցադրեց արեւուն :

Զորս նշաններու բացատրութեամբ, 6րդ Սիւնակը բոլորովին փճացած է :

ԱՆՈՒՇԱՍԻԱՆ ՎՐԴ. ԶԴՋԱՆԵԱՆ (Շարունակելի՝ 12)

ԻՄԵՍՏԵՍԻՐԵԿՆ

Ս. Է. ՌԱՅԹԵԲԸՐ



Ցեսուրիցեք Ցիկերքի Մասից

ԵՒ

Փաստիւ Աստուծոյ Գոյութեան

ԳԼՈՒԽ ԺԸ.

ԴԱՍԱԿԱՆՈՒԹԵԱՆ ԱՆԿՈՒՄԸ

Ինչպէս տեսնը արդէն, կրկնմ Օգգամի աշակերտները կարեւոր գիտեր կատարեցին բնական գիտութիւններու գաւառին մէջ, ԺԴ. դարու վերջերը: Վերածնունդէն ետք, Օգգամեան աւանդութեան ժառանգորդները, անվերապահ համակրներ մաթեմատիկական եւ փորձառական մեթոտին, ջանացին ծուլուիլ մեծ գանգուածին մէջ այս մեթոտը գործարկողներուն եւ կորսնցուցին այսպէսով իրենց կենսունակութիւնը իբրեւ ուրոյն խաղաղ բանգէտներու, ձգելով Արիստոտէլեաններուն Միջին Դարու փիլիսոփայութեան շարունակողներու տիտղոսը: Աւելին՝ Արիստոտէլեանները վերագտան մաս մը իրենց կորստած հռչակէն շնորհիւ իտալացի դոմինիկեան Կարտինալ Դաժէտանի (1469-1534) եւ զար մը ետք՝ յիսուսեան Ֆրանսիսքո Սուարէզի նման գրողներու գործերուն: Սակայն Արիստոտէլեանները բնաւ չընդունցին այն սկզբունքը՝ ըստ որում անկենդան աշխարհի կազմուածքը էապէս մաթեմատիկական է. այս սկզբունքն է որ, եկած Պղատոնէն եւ Պիթագորեաններէն, պիտի ներշնչէր նոր դարու մարդիկը,